Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4243

281.6
Ф-41

1861

2010

8 200 14

79
Ф-42
308
Ф-42

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԱՐԴԱՊԱՏՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵԱԼ
Ի ԲԱՐԵՅԻՐԱՏԱԿ
ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ
ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ.

Կ. ՊՕԼԻՍ
ՏԱՃԱՌԱՑԻՆ ՏՊԱՐԱՆԻ
1861

281.6
Ф-41

y-5 r77

281.6
Գ-41
Printed in Turkey
5

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ԲԱՐԵՅԻՐԱՏԱԿ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ

ՓԷՀՏԻՄԱԼՃԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ·Տ·ՄԱՏԹԷՈՍԻ ՎԷՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ·ՍԱՐԳԻՍԻ
ԱՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Կ·ՊՕԼԻՍ

ՅԱՋԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ

1861

23010

ԷՕՐ

Մուսումեազարդ և Պերճիմաստ Պատուելի Գրիգոր Փէշտիմալճեան, իր յոգնարդիւն աշխատութեանց մէջէն մաս մ'ալ հայկազն մանկունքը 'ի Քրիստոնէութեան հրահանգելու համեմատ այս գրքոյկս շարադրած է. որուն յարգն ու պատիւը արդէն մերազնեայցս վաղծանօթ է։ Լուսոյ սեմնելով որ շատերը կը խնդրէին և առաջին տպագրութիւնը հատած էր. ահա այս անգամ, այդպիսեաց իղձը լցացընելու ջանալով, Կրօնական ժողովոյ և Սրբազան Հօր կամակցութեամբը՝ վերստին սոյնը 'ի լոյս կ'ընծայեմք բնագրին հարազատ հետևութեամբ, միայն տառճկերէն բառերն զանց առնելով զորոնք՝ լուսահոգի Պատուելին արդէն 'ի նոյն տոնէն մանկանց դիւրահասկանալի ընելու համար գործածած է։

3211-55

2012 Printed in Turkey

ՀՐԱՄԱՆԱՒ

Ա ՋԳՄՅԹՆ ԿՐՕՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎՈՅ

Յարեաւ Աստուած և ցրուեցան
ամենայն թշնամիք Նորա։

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հ. Դու ի՞նչ ես։

Պ. Աստուծոյ շնորհօքն քրիստոնեայեմ։

Հ. Որո՞վ եղեր ես քրիստոնեայ։

Պ. Սուրբ աւազանին ծննդեամբն, ուր մկրտեալ եմ յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Հ. Կատարեալ քրիստոնեայն ո՞րն է։

Պ. Կատարեալ քրիստոնեայն այն է, որ Քրիստոսի հրամանը կը կատարէ, ուրբ եկեղեցւոյ պատուիրանքը կը պահէ։

Հ. Քրիստոնէին նշանը ի՞նչ է։

Պ. Քրիստոնէին նշանը, մէյմէ՛ երեսը խաչակնքելն է. մէյմն ալ՝ իւր ընկերը սիրելն է։

Հ. Ի՞նչպէս պէտք է խաչակնքել։

Պ. Այսպէս ըսելով, յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ։

Հ. Քանի՞ քան պէտք է քրիստոնէ

որ փրկութիւն գտնայ՝ և յարքայութիւն երթայ։

Պ. Ղորս բան. հաւատք, յոյս, սէր, և բարի գործ։

Հ. Դանի՞ հարկաւոր բան կայ քրիստոնէին, որ անոնց պիտի հաւատայ։

Պ. Երկու. մէկը՝ սուրբ Երրորդութեան խորհուրդը, թէ Աստուած մէկ է, և երեք անձն ունի. Հայր և Որդի և սուրբ Հոգի։ Եւ մէկ ալ՝ Մարդեղութեան խորհուրդը՝ թէ Որդին Աստուած աշխարհ եկաւ, մարմին առաւ, մեզ նման մարդ եղաւ. և իրեն չարչարանքովը և մեռնելովը՝ մեզի սատանային ձեռքէն ազատեց։

Հ. Ո՞ր բանի պիտի յուսանք։

Պ. Այս երկու բանիս. մէկը՝ թէ քանի կենդանի եմք, Աստուած իւր շնորհքը մեզի կուտայ. և մէկալը՝ թէ երբ որ մեռանիմք, Աստուած իւր արքայութեան փառքը մեզի կուտայ։

Հ. Ո՞վ պիտի սիրենք։

Պ. Ա՛էյմը Աստուած, էմէյմը մեր ընկերը։

Հ. Ի՞նչ բարեգործութիւն պիտի գործենք։

Պ. Աստուծոյ հրամանը կատարեմք. սուրբ եկեղեցւոյ պատուիրանքները տեղը տանիմք. աղօթք ընեմք. պահք պա-

հեմք. և ողորմութիւն տամք։

Հ. Աստուած ինչ է։

Պ. Ամեն ստեղծուածներուն ստեղծողն է. ինքն բնաւ մէկէ մը ստեղծուած չէ. երեք անձն և մի բնութիւն է. ամենաբարի է. ամենազօր է. ամենատես է. ոչ սկիզբն ունի, և ոչ վերջ ունի. յաւիտենական և անփոփոխելի է։

Հ. Աստուած ո՞ւր է։

Պ. Աստուած ամէն տեղ է։

Հ. Ապա ինչո՞ւ երկինքն է կ'ըսենք։

Պ. Երկինքը՝ ամենէն բարձր և պատուաւոր տեղն է. հրեշտակները և սրբոց հոգիքը հոն են. և արքայութիւնը Աստուած այն տեղը սահմաներ է. անոր համար Աստուած յերկինս է կ'ըսեմք, քանզի Աստուած ամեն տեղ է։

Հ. Այլ Աստուա՞ծ է։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Որդին Աստուա՞ծ է։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Հոգին սուրբ Աստուա՞ծ է։

Պ. Այո՛ Աստուած է։

Հ. Անանկ է նէ, երեք Աստուած կը լինին։

Պ. Ոչն ըլլար երեք Աստուած, այլ մի Աստուած է. քանզի երեք անձինքն մէկզմէկէ բաժանուած չեն. այլ մէկ բնութիւն, և մէկ Աստուածութիւն ունին։

Հ. Կրնա՞ս մէկ օրինակ մը տալ ինձ, որ խելքս հասնի։

Պ. Դեղի օրինակ ըլլայ արևն. ահա՛ նախ ինքն արեգակն. երկրորդ՝ լոյսն. երրորդ տաքութիւնն. որ այս երեքս մի են. քանզի բաժանեալ չեն։

Ա՛ռ՝ ակին ջուրն. ակէն վազած դեռ ջուրն. և աւազանին մէջ լցուած ջուրն ուրիշ ուրիշ են, սակայն մէկզմէկէ բաժանված չեն. երեքն մէկ ջուր են։

Հ. Կրնա՞ս ուրիշ պարզ օրինակ մը ևս տալ ինձ, որ աղէկ մը տեղեկանամ։

Պ. Ա՛հա տամ. քեզ մէկ հեշտ հասկընալու, և յայտնի օրինակ մի։

Ա՛յսպէս այբ գիրը (ա), որ երեք ճիւղ կամ սիւն ունի. ամէն մէկ սիւն կատարեալ այբ է, մէկզմէկէ աւելի և պակաս զօրութիւն չունին. և երեք սիւնքն մէկ տեղ գոլով մէկ այբ կ՚ըսվի, և ո՛չ երեք այբ։

Այսպէս Հայր Աստուած Որդին Աստուած Հոգին սուրբ Աստուած, երեք անձինք են, այլ երեք Աստուած չեն, մէկ Աստուած է, մէկ զօրութիւն և արարչութիւն ունին։

Հ. Ինչո՞ւ կը խաչակնքեմք զմեզ։

Պ. Ա՛յսմը այսէ, թէ որովհետև սուրբ խաչն՝ Քրիստոսի նշանն է. Քրիստոսի նշանը մեր վրայ ունենալով՝ յայտնի կը լինիմք թէ քրիստոնեայ եմք՝ և Քրիս-

տոսի ծառայ. և մէկալը՝ սուրբ Երրորդութեան անունը կը յիշեմք. և ասոյ սուրբ Երրորդութեան հաւատալիս, և երկրպագութիւն ընելիս կ'իմացուի։

ԳԼՈՒԽ Բ.

Հ. Հաւատոյ հանգանակը գիտե՞ս։

Պ. Այո՛ գիտեմ. Հա՜ապահ 'ի Ի Ապո՜ծ 'ի հայրն ամենակալ. և այլն։

Հ. Այս հանգանակը քանի՞ մասունք կամ ասոյնական ունի. և ո՞վ ըսաւ։

Պ. Տասն երկու ասոյնական ունի, և սուրբ առաքեալները Երուսաղէմ քաղաքը սուրբ Սիօն վերնատունը սահմանեցին։

Հ. Ո՞րն է առաջին ասոյնականն, և այն ո՞ր առաքեալն ըսաւ։

Պ. Առաջին ասոյնականն է այս. Հա՜ապահ 'ի Ի Ապո՜ծ՝ 'ի հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի։ Եւ զայս Պետրոս առաքեալը ըսաւ։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ՝ թէ մէկ է Աստուած և այս մէկ Աստուածութեան առաջին անձն Հայր ամենակարողն է, որ երկինքը և երկիրս, և զամենայն ինչ որ կայ նէ, իւր ամենակարողութեամբը յոչնչէ ստեղծեց։

Հ. Ո՞ր է երկրորդ աստիճանն և այն ո՞ր առաքեալը ըսաւ։

Պ. Երկրորդ աստիճանն է այս. Ե՞ 'ի Դ ԹԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ։ Եւ այս ըսաւ Յովհաննէս աւետարանիչ։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս Հօր Աստուծոյ որդի է. ինչպէս՝ Հայր Աստուած ամենակալ է, երկնի և երկրի ստեղծօղ է. Յիսուս Քրիստոս ալ Հօր Աստուծոյ պէս ամենակալ է, երկնի և երկրի արարիչ է։

Հ. Ո՞ր է երրորդ աստիճանն և ո՞վ ըսաւ։

Պ. Երրորդ աստիճանն է այս. Մարդեա-ցա՝ մարդացա՝. ծնա՝ խոսարեցաւ 'ի Մարիամայ որոյ կուսէն հոգւովն որոյ։ Եւ այս ըսաւ Յովհաննէս աւետարանիչին եղբայրն՝ Յակոբոս առաքեալն։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածը՝ մեզի փրկելու համար աշխարհ եկաւ. հոգւոյն սրբոյ զօրութեամբը՝ սուրբ կոյս Մարիամ Աստուածածինէն ծնաւ. մեղքէն 'ի զատ մարդկային բոլոր բնութիւնը առաւ. հոգւով՝ մտօք՝ մարմնով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ եղաւ. ոչ Աստուածութիւնը 'ի մարմին փոխուեցաւ, և ոչ

մարմինը Աստուածութիւն փոխուեցաւ։

Հ. Որն է չորրորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Պ. Չորրորդ աստիճանն է այս. Հարէարեալ, խաչեալ, թաղեալ։ Եւ այս ըսաւ Անդրէաս առաքեալն։

Հ. Ա՞ենկէ որ իմանամ։

Պ. Լա՛ կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս մեզի այնքան սիրեց, որ դժոխքին տանջանքէն՝ սատանային ձեռքէն մեզի ազատելու համար, հրէից աղգէն չարչարուեցաւ՝ պոնտացի Պիղատոս դատաւորին իշխանութեան ժամանակը, և սուրբ խաչափայտին վերայ մեռաւ։ Այս ժամանակն Քրիստոսի հոգին ու մարմինը մէկզմէկէ բաժանուեցան. բայց Քրիստոսի աստուածութիւնը ոչ հոգիէն բաժանուեցաւ և ոչ մարմինէն։

Հ. Օրինակ մը տուր որ խելքս հասնի։

Պ. Դեզ օրինակ բլլայ աղեղը, այսինքն օխին Եայը. թէ ասոր թելին մէջտեղէն կտրես, այն թելն՝ մէկզմէկէ կը բաժնուի, բայց աղեղը երկու կտոր թելէն ալ չի բաժնուիր։ Ահա թելը կը նշանակէ Քրիստոսի մարմինը և հոգին, որ մահուան ժամանակը բաժանուեցան. աղեղը կը նշանակէ Քրիստոսի աստուածութիւնը, որ ոչ հոգիէն բաժանուե-

ցաւ և ոչ մարմինէն։

Հ. Որն է հինգերորդ աստիճանն, և ով ըսաւ։

Պ. Հինգերորդ աստիճանն է այս. Էջ 'ի դժոխս։ Եւ այս ըսաւ Թովմաս առաքեալն։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Լսս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս երբ որ խաչին վերայ մեռաւ, մարմնովը նորափոր գերեզմանի մէջ թաղուեցաւ, և հոգւովը դժոխքը ինջաւ, դժոխքը քակեց. և այն բանտին մէջ եղեալ սուրբ նահապետներուն և մարգարէներուն և արդարներուն հոգիքը ազատեց։ Ուստի անոնք որ Ադամայ սկզբնական մեղացը համար այն բանտին մէջ արգելուած էին՝ Քրիստոսի չարչարանքովը և մահուամբը փրկուեցան, և երկինքը ելան։

Հ. Որն է վեցերորդ աստիճանն և ով ըսաւ։

Պ. Վեցերորդ աստիճանն է այս. Յերրորդ աւուր յարութեան՝ 'ի մեռելոց։ Եւ այս ըսաւ Բարթուղիմէոս առաքեալն։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Լսս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս երեք օրէն յետոյ՝ շաբաթ գիշերը որ կիրակի կը լուսանար՝ իւր Աստուածային զօրութեամբն յարութիւն ա-

ռաւ անապական մարմնով։

Հ. Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և ով ըսաւ։

Պ. Եօթներորդ աստիճանն է այս. Համբարձյա- յերկինս, և նոքա- ընդ ամբ Հօր։ Եւ այս ըսաւ Փիլիպպոս առաքեալն։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս յետ քառասուն աւուր յարութեանն՝ իւր Աստուածային կարողութեամբն երկինքը համբարձաւ և հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ, որոյ հետն հաւասար է փառաւք և իշխանութեամբ. և իւր հաւատացելոցը միշտ օգնութիւն կ'ընէ։

Հ. Ո՞րն է ութերորդ աստիճանն և ով ըսաւ։

Պ. Ութերորդ աստիճանն է այս. Գալոյ է դարձեալ ընդ դատել զկենդանիս և զմեռեալս։ Եւ այս ըսաւ Մատթէոս աւետարանիչն։

Հ. Ա՞ենկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս աշխարհիս վերջը դատաստան պիտի դայ անթիւ հրեշտակներով. արդարները յաջ կողմը պիտի կանգնեցընէ, և մեղաւորները ձախ կողմը։ Արդարները արքայութիւն կը տանի, որ յաւիտենական փառք ու պատիւը հոգւով մարմնով վայելեն, և մեղաւորները և անհա-

ւատները դժոխքը կ'ուղարկէ, որ յաւիտենական պատիժ և տանջանք կրեն։

Հ. Ո՞րն է ինն երորդ աստիճանն, և ով ըսաւ։

Պ. Ինն երորդ աստիճանն է այս. Հաստատ 'ի Հոգին սուրբ։ Եւ այս ըսաւ Յակոբոս Ալփեան։

Հ. Ա՞ռկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ 'ի Հոգին սուրբ. որ Հօր և Որդւոյ էակից և համագոյ է։ Եւ ինչպէս Հայր և Որդի անեղ և կատարեալ են, նոյնպէս և Հոգին սուրբ Աստուած անեղ և կատարեալ է. և մեք քանի որ յայս աշխարհս եմք, իւր շնորհքը մեզի կուտայ, որ փրկութեան հասնիմք։

Հ. Ո՞րն է տասներորդ աստիճանն, և ով ըսաւ։

Պ. Տասներորդ աստիճանն է այս. 'ի սուրբ կաթուղիկէ եկեղեցի։ Եւ այս ըսաւ Սիմոն կանանացին։

Հ. Ա՞ռկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ 'ի սուրբ կաթուղիկէ եկեղեցին։ Բայց իմացիր, որ կաթուղիկէ եկեղեցին՝ էն այս քարաշէն և փայտաշէն եկեղեցին, որ կ'ըսուի Ն-ԻՆ-ԻՆ ԵԿԵՂԵՑԻ. այլ ամենայն քրիստոնէից ժողովն է որ կ'ըսուի ՎԻՆՈՐԵԱԼ ԵԿԵՂԵՑԻ։ Որ ամենքն 'ի միասին մէկ մարմին են մի-

ոյ գլխոյ. և այն գլուխն է տէրն մեր Յիսուս Քրիստոս. և մէկ հաւատք, մէկ մկրտութիւն, և մէկ սրբարար շնորհքներն և ամէնքն միմեանց հետ հաղորդութիւն կ'ընեն աղօթքով և բարի գործով։ Ուստի կ'աղօթեմք յարևագալի ժամուն՝ ասելով. Յարևելից մինչև յարևմուտս ընդ ամենայն փեղիս երկրպագեալ-ի՛ է անուն, ուր և կարդան զանուն Տեառն սրբալ-ի՛ է մեր. փեր աղօթի՛ և նոցա և բարեխօսութիամբն մեղուցուցեա՛ զմեզ։ Եւ այս ուղղափառ եկեղեցին ունի այս չորս արտաքին նշանս, այսինքն, մի՝ սուրբ՝ կաթուղիկէ և առաքելական։ Ինչպէս կը քարոզէ եկեղեցին. Աղաչեա՛ զամենայնս Աստուած. վասն միայնոյ՝ սուրբ՝ կաթուղիկէ՝ և առաքելական եկեղեցւոյ։

Հ. Ո՞րն է տասն և մէկերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Պ. Տասն և մէկերորդ աստիճանն է այս. 'ի Լուսաւորիչն մեղայ։ Եւ այս ըսաւ Թադէոս առաքեալն։

Հ. Ա՞ն կնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ թէ այս սուրբ եկեղեցւոյ մէջ՝ մեղաց թողութիւն կ'ընայ. քանզի ո՞վ որ իւր մեղքը զղջայ, խոստովանի, և ապաշխարէ, և Քրիստոսի սուրբ մարմնոյ և արեանն հաղորդի, հարկաւ թողութիւն կը գտնայ։ Եւ այս

իշխանութիւնը Աստուած տուաւ քահանայից որ զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տան։

Հ. Ո՞րն է տասն երկուերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Պ. Տասներկուերորդ աստիճանն է այս 'է յարոնիան մարմնոց, 'է դպրապետն յոհ-ոենից։ Եւ այս ըսաւ Մատթիա առաքեալն։

Հ. Մեկնէ որ իմանամ։

Պ. Այս կը հաւատամ, թէ դատաստանին օրն՝ մեռեալներն իւրեանց մարմնովն յարութիւն կ'առնեն. բարի քրիստոնեայները յաղթայութիւն կ'երթան, և անհաւատները և չար քրիստոնեայները դժոխքը։

ԳԼՈՒԽ Դ.

Հ. Ո՞վ ստեղծ զքեզ, և վասն ի՞նչ պատճառի։

Պ. Աստուած ստեղծ զիս. որ քանի կենդանի եմ, Աստուծոյ ծառայութիւն ընեմ Աստուծոյ պաշտօն մատուցանեմ. և երբ որ մեռանիմ արքայութեան փառացը հասնիմ։

Հ. Ինչո՞վ կ'ըլլայ Աստուծոյ ծառայութիւն ընել։

Պ. Այս երկու բանով կ'ըլլայ. մէյ-

մը՝ որ Աստուծոյ վախը և երկիւղը սրբ-
տերնուս մէջը միշտ կ'ունենանք. և մէկ
ալ՝ Աստուծոյ պատուիրանքը սիրով և
զգուշութեամբ կը պահենք։

Հ. Ի՞նչով կ'ըլլայ Աստուածպաշտու-
թիւն ընել։

Պ. Այս երեք բանովս կ'ըլլայ. նախ՝
ներքին մտօք և հոգւով Աստուծոյ մե-
ծութեանը կը հաւատամք։ Երկրորդ՝
արտաքին կերպով՝ ահիւ և դողութեամբ
Աստուծոյ ծունր կը դնենք, երկրպա-
գութիւն կ'ընենք։ Երրորդ սուրբ պա-
տարագ կը տեսնամք, Աստուծոյ աղօթք
և աղաչանք կը մատուցանենք։

Հ. Աղօթքն ի՞նչ է։

Պ. Աղօթքն է, որ միտքդ առ Աստ-
ուած կը վերցուներս, քեզի ըրած բա-
բերարութեան համար շնորհակալ կ'ըլ-
լաս, և արժանաւոր բան մի կը խնդրես։
Եւ այս երկու կերպ է. մէկն միայն սրտիւ
և մտօք, և կ'ըսուի հպատրդեան աղօթք։
Եւ մէկը՝ բերանով և ձայնիւ, և կ'ըսուի
յայնաւոր աղօթք։

Հ. Ինչո՞ւ համար աղօթքնիս երբեմն
ընդունելի չի ըլլար։

Պ. Երբեք պատճառ ունի. մէկն այն
է, որ հաստատուն հաւատով և յուսով
չենք խնդրեր, այլ երկմտութեամբ և
թերահաւատութեամբ։ Երկրորդ՝ ան-

3211-53

պէտ և անարժան բան մը կը խնդրեմք. ինչպէս՝ գեղեցիկ տուն. չափէն աւելի ստակ և ապրանք. և այլն։ Ուստի կ'ըսէ Յակոբոս առաքեալն, խնդրէք և ոչ առնուք. վասն զի չարաչար խնդրէք։ Երրորդ՝ մեր խստասրտութեան համար է. քանզի մենք երբ որ անգութ և քարասիրտ կ'ըլլանք, մեզի աղաչողին ձայնին չենք լսեր, Աստուած մեր ձայնը ինչպէս պիտի լսէ։ Ուստի եթէ մենք անյիշաչար կ'ըլլանք, մեր ընկերին յանցանքը կը ներենք, Աստուած ալ մեր յանցանքը կը ներէ։ Այս է որ կ'ըսենք Տէրունական աղօթքին մէջը. Թո՛ղ մեզ ըստ որոց մեր, որպէս և մեք թողո՛մք պարտապանաց։

Հ. Այսա՛ Տէրունական աղօթքն որ ըսեմ։

Պ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն։

Հ. Ինչո՞ւ Տէրունական աղօթք կ'ըսվի։

Պ. Քանզի Քրիստոս տէրը սրվը ցուց մեզի այս աղօթքը. և ամէն աղօթքնե-

բէն աւելի մեծ և զօրաւոր է. անոր համար ամէն քրիստոնէի պէտք է բեռան գիտնալ և ըսել, և իւր զաւակացը սորվեցընել։

Հ. Պահքն ի՞նչ է։

Պ. Պահքն է, որ մարդ իւր անձը կը նեղէ, և զինքը կ'արգիլէ՝ փափուկ պարարտ, և գիրցընող կերակուրներէն, այն օրերը՝ որ սուրբ եկեղեցին սահմաներ է։

Հ. Ասկից ուրիշ պահք կայ մի։

Պ. Այո՛ կայ ուրիշ հարկաւոր պահք մի, որ կ'ըսուի ներքին պահք. և այս է, որ մարդս կը պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքէն. քերանը՝ հայհոյութիւն և սուտ խօսելէն. ականջը՝ առասպել խօսք և բամբասանք լսելէն. ձեռքը՝ չար գործելէն։

Հ. Ողորմութիւնն ի՞նչ է։

Պ. Ողորմութիւնը այն է, որ կարօտեալ և խղճալի մարդոյ օգնութիւն կ'ընեմք, և նեղութենէն կ'ազատեմք։

Հ. Ողորմութիւնը քանի՞ կերպ է։

Պ. Երկու կերպ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգեւոր։

Հ. Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւն։

Պ. Այս եօթն են. կերակրել զքաղցեալս. արբուցանել զծարաւեալս. զգե-

ցուցանել զմերկս. ժողովել զօտարս և զպանդուխտս. 'ի տես գնալ հիւանդաց. երթալ մխիթարել զբանտարգեալս. թաղել զանտէր մեռեալս։

Հ. Որո՞նք են հոգևոր ողորմութիւն։

Պ. Այս եօթն են. բարի խորհուրդ տալ երկվիտ մարդուն. խրատել և սորվեցընել տգէտը. յանդիմանել և չեխել մեղքէն եա չի դարձողը. ցաւակից ըլլալ և մխիթարել տրտումը. ներել ընկերին յանցանքը. համբերել նեղութեան, և ժիգոհանք չընել. աղօթք ընել հաւասար կենդանեաց և մեռելոց համար։

ԳԼՈՒԽ Դ

Հ. Աստուծոյ օրէնքը կամ պատուիրանքը քանի՞ է։

Պ. Աստուծոյ պատուիրանքը տասն է. և Մովսէս մարգարէին ձեռօքը տուաւ Աստուած Սինա լեռը, երկու քարեղէն տախտակի վերայ գրած։

Հ. Ո՞րն է առաջին պատուէրը և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Առաջինն է այս. Ես եմ քէր Աստուած քո. դ՚ ելլէյին քեզ Աստուած քոց յինէն։ Եւ այս հրամանս մեզ կը պատուիրէ, մի միայն երկնի և երկրի՝ և ամենայն եղելոց

արարիչ Աստուածը հաւատալ, եւ ուրիշը չի պաշտել։

Հ. Որն է երկրորդ պատուէրը, եւ անկէց ինչ պիտի սորվինք։

Պ. Երկրորդն այս է. Մի՛ աբասցես զքեզ կուռս քանդեալս նմանութիւն. մի՛ երկիր պագանիցես նոցա. և մի՛ պաշտեսցես զնոսա։ Եւ այս հրամանս մեզ կը պատուիրէ, ոսկիէ, արծաթէ, քարէ, փայտէ, և կամ այլ ինչ նիւթէ կուռք չի շինել, և անոր երկրպագութիւն չընել։ Ուստի ագահ մարդը, որ ոսկին ու արծաթը չափէն աւելի կը սիրէ ու կը պատուէ, կռապաշտ կը սեպուի. անոր համար Պօղոս առաքեալը կը գրէ. Ի քաց ընկեցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն։

Հ. Մէկ անհաւատը թէ որ հարցընէ, հապա ինչու պատկերը կը շինէք, և անոր երկրպագութիւն կ'ընէք։

Պ. Ասոր ըսէ թէ, մենք պատկերը Աստուած է չենք ըսեր, քաւ լիցի. այլ պատկերքը տեսնելով, անոր տէրը միտք կը բերենք։ Եթէ սրբոց պատկերք է, խոնարհութիւն և պատիւ կ'ընենք. և այն սուրբը մեզի բարեխօս կը բռնենք. և եթէ տէրունական և Աստուածային պատկեր է, ծնրադրութիւն և երկրպագութիւն կ'ընենք. և այս մեր ըրած խոնարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատ-

կերքին տէրողը կը վերաբերի. անոր համար ձեռագործ պաշտող չենք այլ ճշմարիտ Աստուածապաշտ ենք։

Հ. Ո՞րն է երրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Երրորդ պատուէրն է. Մի՛ առնուցուր անուն Տեառն Աստուծոյ քո՝ ի վերայ անպիտանոյ։ Եւ այս հրամանս կը պատուիրէ, Աստուծոյ երկրպագելի անունը դատարկ տեղը չի յիշենք, կամ սուտ բանի համար վրակայ չի բերենք։ Քանզի ունայն և ոչինչ խօսքի համար՝ Աստուծոյ ահեղ անունը յիշելը՝ սուտ երդում ընել է։ Նաև՝ այն քրիստոնեայն որ անունով միայն քրիստոնեայ է, և մկրտութեան շնորհք և քրիստոնէի գործ չունի, Աստուծոյ անունը ՝ի վերայ սնոտեաց առնողէ։

Հ. Ո՞րն է չորրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Չորրորդն է, Յիշեա՛ զի զօրն զաբբաթոյ սրբել զնա։ Եւ այս պատուէրը մեզի կը սորվեցընէ, վեց օր մարմնաւոր գործ ընել, և մէկ օր հանգչիլ, և Աստուծոյ փառաբանութեան և աղօթից և հոգևոր գործոց պարապիլ։

Հ. Աստուած շաբաթ օրը պատուիրեց հանգչիլ, ինչո՞ւ սուրբ առաքեալները կիրակի օրը սահմանեցին։

Պ. Պատճառն այս է. քանզի Քրիստոս

տէրն մեր կիրակի օրը յարութիւն առաւ, և մեզի սատանային ծառայութենէն ազատեց. և 'ի պատիւ Քրիստոսի յարութեանը սահմանեցին սուրբ առաքեալները՝ կիրակի օրը ծառայական գործքէ ազատ կենալ։

Հ. Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Հինգերորդն է. Պատուեա՛ զհայր ՝ո և զմայր ՝ո. զի ՝երկ բարի լինիցի՝ և երկայնակեաց լինիցի՝՝ 'ի վերայ երկրի՝՝ բարու-թեան։ Եւ այս պատուէրս մեզի կը սորվեցընէ, թէ ծնողքդ պատուէ խոնարհութեամբ և պատկառանօք. անոնց հարկաւոր պէտքը քո կարողութեանդ չափ հոգայ, և մի՛ տրտմեցըներ. որ Աստուած քեզի բարի ընէ, և շատ ապրիս։

Հ. Այս պատուէրէն այլ ի՞նչ կ'մացվի։

Պ. Հայր ըսելով՝ կ'իմացուի ամենայն երախտիք և բարութիւն ընողները. ինչպէս՝ թագաւորը, իշխանը, վարդապետը, վարժապետը, և անոնք ամենայն՝ որ հօրպէս գութ և խնամք ունին մեր վրայ, և մեր աղէկութեան պատճառ կ'ըլլան։

Հ. Ո՞րն է վեցերորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Վեցերորդն է. Մի՛ սպանաներ։ Եւ այս հրամանս կ'արգիլէ՝ առանց իրաւանց մարդ սպանանելը. ինչպէս՝ որ դա-

տաւորէ, իշխանութիւն չունի, և մարդ կ'թոպանանէ. և կամ թէ իշխանութիւն ունի, և դատարկ տեղն կ'ըսպանանէ։ Եւ մարդասպանութիւնը շատ անգամ յառաջ կուգայ բարկութենէն, անոր համար Քրիստոս տէրն մեր հրամայեց, թէ մի՛ բարկանայք և ըսաւ՝ թէ Ամենայն որ բարկանայ եղբօր ի-ր-ո-մ պարապարդոց, պարապարդ լիցի գեհենայն։

Հ. Բանի՞ կերպ է մարդասպանութիւնն։

Պ. Երկու կերպ է. մէկը մարմնաւոր է, որ մարդոյ մարմինը և հոգին մէկզմէկ կը բաժնէ. և մէկալը հոգևոր է, որ իւր հաւատակից եղբայրը և ընկերը կ'ատէ. ասոր համար կ'ըսէ Յովհաննէս աւետարանիչը. թէ Որ ատէ զեղբայր ի-ր մարդասպան է։

Հ. Ո՞րն է եօթներորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Եօթներորդն է. Մի՛ շնար։ Եւ այս հրամանս մեզի կ'արգիլէ ամէն չար գործքէ. որով կը խլատիմք, պարկեշտ և սուրբ պահել մեր հոգին և մարմինն։

Հ. Ո՞րն է ութերորդ պատուէրը՝, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Ութերորդն է. Մի գողանար։ Եւ այս հրամանս մեզի կ'արգիլէ այն ամէն բանէն որ օտարի է՝ չը գողնալ, և չը յափշտա-

կել, ոչ ծածուկ, ևոչ յայտնի։

Հ. Ուրիշ կերպ գողութիւն ալ կայ մի։

Պ. Նաև գողութիւն կը սեպուի՝ բանուորին վարձքը օրէ օր ձգել. կամ էվել պակաս չափ գործածել. կամ լաւը ցուցընել, և գէշը տալ։ Եւ գիտցիր, որ այլ մեղքերը ապաշխարանքով կը ջնջուին, այլ գողութիւնն 'ի տէրն պիտի դառնայ։

Հ. Որն է ինն երորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Պ. Ինն երորդն է. Մի՛ ասա՛ վկայեր ղընկերէ քո՝մէ։ Եւ այս հրամանս մեզի կ'արգիլէ այն ամէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութիւն չի տանք։

Հ. Ուրիշ կերպ սուտ վկայութիւն ալ կայ մի։

Պ. Այո՝ սուտ վկայ են բամբասողները՝ որ ընկերին բարի անունը կ'ապականեն։ Սուտ վկայ են բանսարկութիւն ընողները, որ տարաձայնութիւն և կռիւ կը ձգեն՝ տան և ընտանեաց մէջ, բարեկամի մէջ, ընկերի մէջ, և այլն։ Սուտ վկայ է մարդ ահաձոյն, որ աչքէ չելլալու համար, սուտ խօսքերուն՝ այո՝ այդպէս է կ'ըսէ։ Դաւիթ մարգարէն զայդ պիսի մարդն կ'անիծէ ասելով. Անիծեսցէ զանիծեսցէ զքոյրս մարդահաճոյից։ Ուստի ամէն սուտ խօսողները՝ որդի սատանայի կը

կոչէ Տէրն մեր, որովհետև կ'ըսէ. Ոչ սո՛ւտ խօսի, յիշ-ցոյ անպէտ խօսի. չէ սուտ է և հայր նորա սուտանայ. և կը պատուիրէ, թէ եղիցի բան յէր, այո՛ն այո՛. և ոչն ոչ։

Հ. Ո՞րն է տասներորդ պատուէրը, և անկէց ինչ պիտի սորվինք։

Պ. Տասներորդն է. Մի՛ ցանկանար պան ընկերի *ո, և մի՛ անցոյ նորա. մի՛ ցանկանար ինոջ ընկերի *ո, և մի՛ ծառայից նորա. և մի՛ ամենայնի չինչ ընկերի *ո էյէ։ Եւ այս հրամանաւս կ'արգիլէ Աստուած մեր սիրտը՝ ամէն կերպ չար ցանկութենէն. և բաւական պիտի համարիմք այն, որ ինչ Աստուած մեզի տուեր է, թէ տուն, և թէ այլ ինչ ստացուածք։ Որովհետև ցանկութիւնը՝ մեղք կը ծնանի. և մեղքը՝ մահ և դատապարտութիւն կը բերէ։ Եւ որովհետև սրտին դուռը մարդոյս աչքն է, պէտք է որ աչքերնիս զգուշութեամբ պահպանեմք, որ ցանկութիւնը գողի նման սրտերնիս չի մտնայ, և մեր հոգին չըսպանանէ։

Հ. Ո՞րն է ամէն պատուիրանաց կատարումը։

Պ. Ամէն օրինաց և պատուիրանաց կատարումը Սէրն է. ինչպէս Պօղոս առաքեալը կը գրէ, եթէ Լրո՛ն օրինաց Սէր է, 'ի սո՛ւրբ սրտէ, և 'ի մաքուր բարեաց, և յանկեղծաւոր հա՛ւատոյ։

Հ. Առաջ ով պիտի սիրեմք։

Պ. Նախ և առաջ պարտաւոր եմք զԱստուած սիրել, որ մեզի ստեղծեր է, և կը խնամէ։ Ահա Հայր Աստուած զՈրդին միածին աշխարհք խրկեց մեզի փրկելու համար։ Որդին միածին եկաւ, մարմին առաւ, մեզի փրկեց։ Հոգին սուրբ իւր շնորհքը մեզ կուտայ, որ ճշմարտութիւնը ճանաչեմք, և բարին կամենամք։

Հ. Երկրորդ ով պիտի սիրեմք։

Պ. Երկրորդ՝ մեր անձը պիտի սիրեմք. մեղքէն հեռի պահեմք. բարի գործեմք, որ Աստուածային ողորմութեանը և արքայութեանը հասնիմք։

Հ. Երրորդ՝ ով պիտի սիրեմք։

Պ. Երրորդ՝ մեր ընկերը պիտի սիրեմք՝ մեր անձին նման. որովհետև մէկ աւազանէ ծնեալ եղբայր եմք. մէկ հաւատք, մէկ մկրտութիւն ունիմք. և մէկ արքայութիւն պիտի երթամք։ Եւ սուրբ առաքեալը կ'ըսէ թէ, ով որ իւր եղբայրը կ'ատէ, մարդասպան է։

րևնայ, այլ իսկապէս Քրիստոս է. և մեք անոր Ճաշակմամբը՝ կեանք՝ և կենդանութիւն կ'ըստանամք։ Նաև՝ Քրիստոսի սէրը մտքերնիս կը բերեմք և կը յիշեմք, թէ մեզի այնքան սիրեց, մինչև որ իւր մարմինը և արիւնը մեզի հոգևոր կերակուր և ըմպելի տուաւ, որով մեր հոգին կենդանի ըլլայ։

Հ. Այս կը հաւատամ, թէ սրբագործեալ նշխարքն իսկապէս Քրիստոս է. միայն զայս կ'ուզեմ սորվիլ, երբ որ քահանայն մէկ նշխարքը մասն մասն կը բաժնէ, ինչպէս ամբողջ կը մնայ մէկ Քրիստոս այն բաժանեալ մասանց մէջը. ուստի կը խնդրեմ ինձ մէկ օրինակ մի տալ որ խելքս հասնի։

Պ. Մեզի օրինակ ահա արեգակը, որ մէկ հատ է աշխարհիս մէջ, և մէկ կ'երևնայ ամբողջ հայելիին մէջը. և եթէ կտոր կտոր ընես այն հայելին, մի և նոյն արեգակն է, որ կ'երևնայ ամէն մէկ կտոր հայելիին մէջը, և իւր ամբողջութիւնը չի կորսընցներ. այսպէս մէկ Քրիստոս է ամբողջ նշխարքին մէջ, և բեկեալ մասանց մէջ։

Հ. Ապաշխարութիւնն ինչ է։

Պ. Ապաշխարութիւնն է, իւր գործեալ մեղքը լալ, և կամաւոր պատիժ կրել։

Հ. Քանի՞ բան պէտք է ապաշխարուն։

Պ. Զորս բան. առաջինն է՝ զղջումն գործեալ մեղքին։ Երկրորդն է՝ առաջադրութիւն կրկին անգամ չի գործելոյ։ Երրորդն է՝ ճշմարիտ խոստովանութիւն առաջի քահանային։ Չորրորդն է՝ կատարեալ վճարումն դրած ապաշխարանքին։ Եւ այս սուրբ խորհուրդը՝ քահանային արձակումն տալովը կը ջնջէ բոլոր ներգործական մեղքերը, եթէ մահացուն, և եթէ ներելին։

Հ. Երջին օծումն ինչ է։

Պ. Երջին օծումը՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մի է, որ քահանայական աղօթքին զօրութեամբը ծանր հիւանդները կը բժշկէ, և անոնց ներելի մեղքը կը քաւէ։

Հ. Այսոց սուրբ եկեղեցին վերջին օծման խորհուրդը կը կատարէ՞ մի։

Պ. Այո՛, ծանր հիւանդներուն վերայ քանի անգամ հարկաւոր է նէ՝ կը կատարէ. և այս սուրբ խորհուրդն է՝ որ կ'ըսուի Գիւղերծամ, ուր քահանայքն կը կարդան սաղմոս, գիրք, բժշկութեան աւետարան, աղօթք. և յետոյ փարատեցո՛ զցաւս կ'ըսեն։

Հ. Այ՝ի թէ՞ օրհնեալ իւղով հիւանդը օծել հարկաւոր է։

Պ. Իւղով օծել՝ ազգային ծէս, և խորհրդական արարողութիւն մի է, և հա-

ւատոյ մասչէ, անոր համար իւղոյ գոր-
ծածութիւն հարկաւոր չէ, որովհետև ա-
սանկ ծիսական արարողութիւններ ամ-
մէն քրիստոնեայ ազգի մէջ՝ կ'ըլլայ որ
կը փոփոխուին, և կ'ըլլայ որ խափանին։
Իսկ բուն զօրութիւնը այս խորհրդոյս է
քահանայական աղօթքը և ընթերցու-
ածքը. և այն է հաւատոյ մասը և հար-
կաւորը, և այս ամենևին չի խափանիր.
ինչպէս կը գրէ մեծն Խոսրով ժամագըր-
քի մեկնութեան մէջը, 281 երեսը, թէ
Աղօթն հաւատքով երկեսցեն զաշխարհն։

Հ. Քահանայութեան կարգն ինչ է։

Պ. Քահանայութեան կարգը հոգև-
որ իշխանութիւն մի է, որ 'ի հոգւոյն
սրբոյ կ'առնու ձեռնադրեալն. և իշխա-
նութիւն կ'ունենայ պատարագ մատու-
ցանել, անգարձ մեղաւորը կապել, և
զղջացող մեղաւորին արձակում և թո-
ղութիւն տալ։

Հ. Պսակն ինչ է։

Պ. Պսակն՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդ
մի է, որ այրը և կինը սուրբ սիրով և հա-
ւատարմութեամբ կը կապակցէ իրարու
հետ, որ զաւակ ծնանին, և քրիստոսի եկե-
ցին աճեցուցանեն։

ԳԼՈՒԽ Զ.

Հ. Բարոյական առաքինութիւնք քանի՞ են։

Պ. Չորս են. այսինքն՝ Խոհեմութիւն, Արիութիւն, Արդարութիւն, և Բարեխառնութիւն։

Հ. Խոհեմութիւնն ի՞նչ է։

Պ. Խոհեմութիւնն ան է որ անով չարը՝ բարին կը ճանաչեմ՝, և մէկզմէկէ կը զատեմք. և ամմէն ընելու բաներնիս՝ ըստ արժանւոյն կը անօրինեմք։

Հ. Արիութիւնն ի՞նչ է։

Պ. Արիութիւնն է, որ անով ամմէն դժուարութեան, և աշխարհքի փորձութեան համբերութեամբ կը յաղթեմք՝ ոչ յաջողութեան ժամանակը կը հպարտանամք, և ոչ ձախորդութեան ժամանակը կը տրտմիմք։

Հ. Արդարութիւնն ի՞նչ է։

Պ. Արդարութիւնն է, որ անով ամմէն մարդոյ արժանի և վայելուչ եղածը կ՚ընեմք. թէ պատուել պէտք է՝ կը պատուեմք, թէ վախնալ արժան է՝ կը վախնամք, թէ ողորմելու կարօտ է՝ ողորմութիւն կ՚ուտամք։ Եւ այս արդարութիւն է, որ մեզնէ մեծին պատիւ ընեմք. մեզ հաւասարին հետ սիրով կենցաղավարիմք. մեզնէ պզտիկին խը-

նամք և գթութիւն ընեմք։

Հ. Բարեխառնութիւնն ինչ է։

Պ. Բարեխառնութիւնը՝ ամէն ան-կարգ ցանկութեան սանձն է. որ անով չար ցանկութիւնը կը խափանի։

Հ. Այս ըսած առաքինութիւններդ ամմէն ազգի՝ և ամմէն մարդու հասա-րակ է. քրիստոնէի յատուկ եղած ա-ռաքինութիւն ալ կայ մի։

Պ. Այո՛ կայ, որ Քրիստոս տէրը ինքն ըսաւ, և մեզ սորվեցուց, և է այս չորսս. Խոնարհութիւն, Սէր, Համբերութիւն, և Ներողութիւն։

Գ. ԼՈՒԽ Է.

Հ. Բանի՞ առաքինութիւն կայ, որ անոնք գործելով երանութեան արժա-նի կ'ըլլայ մարդս այս աշխարհիս մէջ, և վերջապէս երանութիւն կը գտնայ ար-քայութեան մէջ։

Պ. Ութը կերպ առաքինութիւն կայ, որ կ'ըսուին ո-ր երանո-ւթի-ւն։

Հ. Որն է առաջին երանութիւնն։

Պ. Առաջինն է, հոգւով աղքատ ըլ-լալ. այսինքն՝ մարդս իւր ունեցած մարմ-նաւոր ստացուածքը բանի տեղ չի սե-պել, և անով չի հպարտանալ, և չունե-նալուն համար չի տրտմիլ։

Հ. Ի՞նչ է երկրորդ երանութիւնը։

Պ. Երկրորդն է, հեզ ըլլալ. այսինքն՝ եթէ մէկը իւրեան թշնամութիւն ընէ, անոր դէմ չի բարկանալ, քէն չի պահել, և թշնամութիւն չընել. այլ փոխարէնը բարի ընել։

Հ. Ի՞նչ է երրորդ երանութիւնը։

Պ. Երրորդն է սգաւոր ըլլալ. այսինքն՝ իւր մեղքը լալ և սգալ. և այսպէս լալով իւր կորուստեալ հոգին գտնալ։

Հ. Ի՞նչ է չորրորդ երանութիւնը։

Պ. Չորրորդն է, քաղցեալ և ծարաւի ըլլալ արդարութեան. այսինքն՝ ինչպէս անօթի մարդը հացին, և ծարաւ մարդը ջրոյն կը փափաքի. այնպէս փափաքիլ արդարութեան։

Հ. Ի՞նչ է հինգերորդ երանութիւնը։

Պ. Հինգերորդն է՝ ողորմած ըլլալ. այսինքն՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր ողորմութեամբ՝ կարօտեալ և խղճալի մարդոյն ողորմիլ։

Հ. Ի՞նչ է վեցերորդ երանութիւնը։

Պ. Վեցերորդն է, սիրտ սուրբ ունենալ. այսինքն՝ սիրտը մաքուր հայելիի պէս պահել, որ զԱստուած տեսնելու արժանի ըլլայ։

Հ. Ի՞նչ է եօթներորդ երանութիւնը։

Պ. Եօթներորդն է, խաղաղարար ըլլալ. այսինքն՝ մէկզմէկու մէջ եղեալ

թշնամութիւնը և ատելութիւնը վերցուցանելու ջանք ընել, և խաղաղութիւն հաստատել. և այսպիսի մարդն՝ որդի Աստուծոյ կը կոչուի. վասն զի նման կ'ըլլայ Որդւոյն Աստուծոյ, որ մեր և Աստուծոյ մէջ եղեալ թշնամութիւնը՝ իւր խաչելութեամբն վերցուց, և խաղաղութիւն ըրաւ։ Ուստի ով որ խռովութիւնը կը սերմանէ՝ որդի սատանայի է. և Քրիստոսի խաչը և մահը՝ անպտուղ կ'ընէ։

Հ. Ի՞նչ է ուխտերորդ երանութիւնը։

Պ. Ուխտերորդն է, արդարութեան համար հալածուիլ կրել. այսինքն՝ ամէն կերպ նեղութեան համբերել, թէ հաւատոյ, թէ ճշմարտութեան համար, ահա Քրիստոս ասէր՝ ճշմարտութեան համար աշխարհ եկաւ արիւն թափեց. ինչպէս իւր սուրբ բերանովը կը վկայէ, թէ Ցայն իսկ եկեալ եմ, չի վիրաւորիլ ճշմարտութեան։

ԳԼՈՒԽ Ը.

Հ. Պ՞եղքն քանի՞ կերպ է։

Պ. Երկու կերպ է. սկզբնական և ներգործական։

Հ. Ո՞րն է սկզբնականն։

Պ. Ակզբնական մեղքն է, որ Ադամ նախահայրէն սերեալ ունիմք ամէնքս։ Եւ այս կը ջնջուի սուրբ մկրտութեամբ։

Հ. Որն է ներգործական։

Պ. Ներգործական մեղքն է, որ յետոյ մեր կամքը չար կը գործեմք։ Եւ այս կը ջնջուի զղջմամբ, խոստովանութեամբ, և ապաշխարութեամբ։

Հ. Ներգործական մեղքը քանի՞ կերպ է։

Պ. Լրկու. Ներելի և մահացու։

Հ. Ներելի մեղքն ինչ է։

Պ. Ներելին այն է՝ որ ըստ ինքեան թեթև մեղք է. կամ որ տկարութեամբ կամ չդիտութեամբ չար կը գործեմք և Աստուծոյ սէրը սրտերնուս մէջը ունիմք։

Հ. Մահացու մեղքն ինչ է։

Պ. Մահացուն այն է՝ որ ըստ ինքեան մեծ մեղք է, կամ որ յօժար կամօք և գիտութեամբ չար կը գործեմք և Աստուծոյ սէրը սրտէ կը հանեմք։

Հ. Գլխաւոր մահացու մեղքերը քանի՞ են։

Պ. Լօթն են. այսինքն՝ Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, և Բղջախոհութիւն։

Հ. Որն է մեղք զանգառութեան, և որն է մեղք առնելութեան։

Պ. Այս գիտցիր, որ Աստուծոյ պատուիրանաց ոմն յանձնառական է, որ կը պատուիրէ թէ ըրէ, ինչպէս՝ Պատուէ՛ զհայր քո և զմայր, և ոմն հրաժարական է, որ կ՚արգիլէ, թէ մի՛ ըներ, ինչպէս՝ Մի՛ սպանաներ, մի՛ գողանար։ Ահա եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք, կ՚ըսուի մեղք գանցառութիւն։ Եւ եթէ հրաժարականէն հեռի չի կենամք և Աստուծոյ հրամանին դէմ գործեմք, կ՚ըսուի մեղք առնելութիւն։

Հ. Քանի՞ հարկաւոր բան կայ մարդերնիս պահելու, որ մեղքէ հեռի մնամք։

Պ. Այս չորս բանս է, Մահն, Դատաստանն, Դժոխքն և Արքայութիւնն։

1-501

4243

4103